

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ



ՀՀ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝ ք. Եղեգնաձոր



Տարածքը	2308 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	75939 հա
այդ թվում՝ վարելահողեր	19857 հա
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Գյուղական բնակավայրեր	52
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	55.8 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	19.4 հազ. մարդ
գյուղական	36.4 հազ. մարդ

ՀՀ Վայոց ձորի մարզը զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7.8%-ը: Մարզի բնակչությունը 2003թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 1.7 %-ը: Մարզի բնակչության 65.2 %-ը բնակվում է գյուղական վայրերում:

ՀՀ Վայոց ձորի մարզն ընդգրկում է Վայքի և Եղեգնաձորի տարածաշրջանները՝ 3 քաղաքներով և 52 գյուղական բնակավայրերով:

ՀՀ Վայոց ձորի մարզի սահմանները վարչատարածքային տեսակետից քիչ են փոփոխությունների ենթարկվել իր՝ պատմական Սյունիք նահանգի Վայոց ձոր գավառի սահմաններից: Սահմանների կայունությունը բացատրվում է տարածքի մակերևույթի առանձնահատկությամբ: Վայոց ձորը, որպես գոգահովիտ, շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք, յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

Վայոց ձորը բնակավայր է եղել ամենավաղ՝ քարեդարյան ժամա-նակներից սկսած և կյանքը հարատևել է առանց ընդհատումների:

Պատմական Վայոց ձորը Սյունիք նահանգի ամենամեծ նահանգներից էր, և որոշ տարիներ եղել է նրա վարչական կենտրոնը: Վայոց ձորը մեծ դեր է խաղացել միջնադարյան հայ մշակույթի զարգացման գործում: Այնտեղ է գործել Գլաձորի (XIIIդ.) հռչակավոր համալսարանը, ուր աշխատել և ստեղծագործել են տաղանդավոր գիտնականներ, գրիչներ և մանրանկարիչներ, որոնց գրած ու նկարագրողաձ բազմաթիվ ձեռագրեր այսօր էլ հիացմունք

են պատճառում: Վայոց ձորում են գտնվում նյութական մշակույթի հոյակապ հուշարձաններ՝ Նորավանքը, Գնդկանքը, Շատի, Թանահատի, Հերմոնի, Եղեգիսի վանքերը, Սուլեմա (Սելիմի) քարավանատունը և բազմաթիվ այլ ճարտարապետական զարմանահրաշք կոթողներ, որոնք զբոսաշրջիկների մշտական այցելության վայրեր են:

Վայոց ձորը գտնվում է Արփա գետի ավազանում (2630 կմ²), արևելքից շրջապատված է Ջանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսային հատվածով, սահմանակից է Սյունիքի Ծղուկ և Արցախի Ծար գավառներին, հարավից՝ Սյունիքի Ճահուկ գավառին: Արևմուտքից Վայոց ձորի լեռնաշղթաները աստիճանաբար ցածրանալով հասնում են Շարուրի դաշտավայրը (Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն): Հյուսիսից շրջապատված է Վարդենիսի լեռնաշղթայով, սահմանակից դառնալով Գեղարքունիք և Սոթք գավառներին:

Արտակարգ խայտաբղետ է Վայոց ձորի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և նրա վտակների ջրերը առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնացքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով : Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է + 40° C-ի , իսկ բացարձակ նվազագույնը՝ -35° C-ի: Տեղումները կազմում են 300-ից 700 մմ:

Վայոց ձորի մարզը ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 4.6%-ը կազմում են բնական անտառները:

Մարզով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում: Ավարտվել է կենսական նշանակություն ունեցող Եղեգնաձոր –Մարտունի ավտոճանապարհի կառուցումը: Կառուցվել է Մալիշկա գյուղը շրջանցող ավտոճանապարհը:

ՀՀ Վայոց ձորի մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը 2003թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 0.8%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 4.5%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 0.6% և մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 0.6%:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Արդյունաբերության բնագավառում հիմնականում զարգացած են հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները, որոնց տեսակարար կշիռները 2003թ հանրապետության հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունների ընդհանուր ծավալում համապատասխանաբար կազմել են՝ 89.3% և 23.7%: Հարկ է նշել, որ գինու արտադրությամբ զբաղվող գործարանները տեղաբաշխված են հիմնականում գյուղական վայրերում՝ Արփի, Արենի, Գետափ և Աղավնաձոր :

2003թ. մարզում գործել են 36 արդյունաբերական, 7 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 2 ձկնորսության ու ձկնաբուծության, 6 շինարարական, 6

տրանսպորտային, 63 ծառայություններ մատուցող, 138 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 44-ը խանութներ են, 83-ը՝ կրպակներ, 9-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ գյուղարտադրանքի և 1-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ: Մարզում գործել են նաև 51 հանրակրթական, 3 երաժշտական և արվեստի, 3 մարզական դպրոցներ, 2 վարժարան, 17 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական և 2 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 թանգարան, 50 գրադարան, 2 հյուրանոց, 8 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 3 հիվանդանոց և այլն:

Եղեգնաձորի տարածաշրջան

Վարելահողեր	9433 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	25
Գյուղական բնակավայրեր	31
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	35.8 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	8.2 հազ. մարդ
գյուղական	27.6 հազ. մարդ

Եղեգնաձոր քաղաքը (8.2 հազ. բնակիչ) համարվում է Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 119 կմ հեռավորության վրա: Քաղաքի շրջակայքում պահպանվել են Կիկլոպյան ամրոցի մնացորդներ:

2003թ. **տարածաշրջանում** գործել են 20 արդյունաբերական, 6 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 4 շինարարական, 3 տրանսպորտային, 37 ծառայություններ մատուցող, 44 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 21-ը խանութներ են, 17-ը՝ կրպակներ, 4-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 1-ը՝ գյուղարտադրանքի և 1-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ:

Տարածաշրջանում գործել են նաև 30 հանրակրթական, 1 վարժարան, 1 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոցներ, 13 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 թանգարան, 31 գրադարան, 1 հյուրանոց, 5 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

2003թ. քաղաքում գործել են 9 արդյունաբերական, 3 շինարարական, 3 տրանսպորտային, 37 ծառայություններ մատուցող, 40 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 2-ը հանրային սննդի օբյեկտներ են: Ընդ որում, գործող արդյունաբերական կազմակերպություններից 2-ը զբաղվել են հացի, 1-ը՝ գինու և 1 -ը՝ ռելեի արտադրությամբ: Քաղաքում վերստին սկսվել են պահածոների, տրիկոտաժի, ոսկերչական իրերի արտադրությունը:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 1 վարժարան, 3 հանրակրթական, 1 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, երկրագիտական թանգարան և այլն:

Վայքի տարածաշրջան

Վարելահողեր	10424 հա
Քաղաքային համայնքներ	2
Գյուղական համայնքներ	16
Գյուղական բնակավայրեր	21
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	20.0 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	11.2 հազ. մարդ
գյուղական	8.8 հազ. մարդ

2003թ. **տարածաշրջանում** գործել են 16 արդյունաբերական, 1 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 2 ձկնորսության ու ձկնաբուծության, 2 շինարարական, 3 տրանսպորտային, 26 ծառայություններ մատուցող, 94 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 23-ը խանութներ են, 66-ը՝ կրպակներ, 5-ը՝ հանրային սննդի օբյեկտներ:

Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 21 հանրակրթական, 2 արվեստի և երաժշտական, 2 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 19 գրադարան, 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 2 հիվանդանոց և 1 հյուրանոց:

Վայք քաղաքը (նախկին Ազիզբեկով) գտնվում է Երևանից 135 կմ հեռավորության վրա: Բնակչության թվաքանակը կազմում է 6.0 հազ. մարդ: Քաղաքի մուտքը զարդարում է «Սուրբ Տրդատ» նորակառույց եկեղեցու հոյակապ շենքը:

2003թ. քաղաքում գործել են 8 արդյունաբերական, 2 շինարարական, 2 տրանսպորտային, 16 ծառայություններ մատուցող, 42 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 4-ը՝ հանրային սննդի օբյեկտ: Ընդ որում, արդյունաբերական 3 կազմակերպություններ զբաղվել են «Ջերմուկ» հանքային ջրի շշալցմամբ, 1-ը՝ գորգագործությամբ, 1-ը՝ ոսկերչական իրերի և 1-ը շինանյութերի արտադրությամբ:

Քաղաքում գործել են նաև 2 հանրակրթական, 1 վարժարան և 1 երաժշտական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 1 հյուրանոց և այլն:

Ջերմուկ քաղաքը (6.3 հազ.բնակիչ) գտնվում է 2070 մ բարձությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից 170 կմ է): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Դանաչված առողջարաններից են «Նարեկ»-ը, «Աղաջանյանի անվան առողջարանը», «Նաիրի - ԲԱՄ»-ը, «Զարթոնք»-ը, «Արարատ»-ը և «Երագ»-ը:

Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ: Քաղաքում ծավալված է ոչ ոգելից ըմպելիքների՝ «Ջերմուկ» հանքային ջրի արտադրությունը:

2003թ. քաղաքում գործել են 8 արդյունաբերական 1 տրանսպորտային, 10 ծառայություններ մատուցող, 37 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 1-ը հանրային սննդի օբյեկտ է:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 2 հանրակրթական, 1 երաժշտական և արվեստի դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 մարզահամալիր, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր
Ջերմուկ	ք. Ջերմուկ գ. Կեչուտ
Վայք	ք. Վայք

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ


Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ագարակաձոր	Ագարակաձոր
Ագատեկ	Ագատեկ
Աղավնաձոր	Աղավնաձոր
Աղնջաձոր	Աղնջաձոր
Արենի	Արենի Ամադու
Արին	Արին
Արտաբույնք	Արտաբույնք
Արտավան	Արտավան
Արփի	Արփի
Բարձրունի	Բարձրունի
Գետափ	Գետափ
Գլաձոր	Գլաձոր
Գնդեվազ	Գնդեվազ
Գնիշիկ	Գնիշիկ Մոզրով
Գողթանիկ	Գողթանիկ
Գոմք	Գոմք Ախտա Կապույտ
Ելփին	Ելփին
Եղեգիս	Եղեգիս
Զառիթափ	Զառիթափ Հորաղիս
Զեղեա	Զեղեա
Թառաթումբ	Թառաթումբ
Խաչիկ	Խաչիկ
Խնձորուտ	Խնձորուտ
Կարմրաշեն	Կարմրաշեն
Հերիեր	Հերիեր
Հերմոն	Հերմոն Արատես Կալասար
Հորբատեղ	Հորբատեղ
Հորս	Հորս
Մայիշկա	Մայիշկա
Մարտիրոս	Մարտիրոս
Նոր Ազնաբերդ	Նոր Ազնաբերդ
Շատին	Շատին
Չիվա	Չիվա
Ռինդ	Ռինդ
Սալի	Սալի
Սարավան	Սարավան Ուղեձոր
Սերս	Սերս
Վարդահովիտ	Վարդահովիտ Սևաժայռ Գետիկվանք
Վերնաշեն	Վերնաշեն
Փոռ	Փոռ
Քարագլուխ	Քարագլուխ

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ
ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5108	4892
Ծնվածներ	121	62	59
Մահացածներ	79	40	39
Ամուսնություններ	48	X	X
Ամուսնալուծություններ	6	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	25.3	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	128	65	63
հանրակրթական	1927	984	943
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	116	59	57
միջին մասնագիտական	60	31	29
բարձրագույն մասնագիտական	-	-	-
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	23
Մարզիկներ, մարդ	111	57	54
Զբաղվածներ, մարդ	4892
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	210	107	103
բժիշկներ	18
կրտսեր բուժանձնակազմ	48
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	297	152	145
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2000
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	642	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	43477
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	125
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	131	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	134
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	27	X	X



Նորավանք



Մնբատաբերդ